ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 17.01.2024թ. հ.082 գրության՝ Երևան քաղաքում ասֆալտապատում իրականացնող, բետոնե սալիկ արտադրող և շարող ընկերությունների, ասֆալտապատման և բետոնե սալիկապատման մրցույթների անցկացման մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ, տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանում բոլոր մրցութային գործընթացներն իրականացվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված դրույթների համաձայն:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 2023թ.-ին վարչության ասֆալտապատման աշխատանքների ծրագրի շրջանակներում հրապարակված մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպություններն են՝ «Ա.Ա.Բ. պրոեկտ» ՍՊԸ-ն, «Շիրինշին» ՍՊԸ-ն, «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն, «Արհովշին» ՍՊԸ-ն, «Լիգոշին» ՍՊԸ-ն և «Հիպերնովա» ՍՊԸ-ն:

Վարչական շրջաններում ասֆալտապատման աշխատանքները կատարվել են «Գնումների մասին» օրենքին և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմանը համապատասխան, և հայտարարված մրցույթների մասին տեղեկատվությունն ամբողջությամբ հասանելի է https://gnumer.minfin.am/ էլեկտրոնային հարթակում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան քաղաքում բետոնե սալիկ արտադրող և շարող ընկերությունների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում տեղեկատվություն առկա չէ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ